ՆՈՎՈՌՈՍՍԻՅՍԿ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԱՎԱՌ

# ՀՈՒՇԱԳԻՐ
# ԳԱՎԱՌ /ՀԱՅԱՍՏԱՆ/ ԵՎ ՆՈՎՈՌՈՍՍԻՅՍԿ /ՌՈՒՍԱՍՏԱՆ, ԿՐԱՍՆՈԴԱՐԻ ԵՐԿՐԱՄԱՍ / ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

Նովոռոսսիյսկ /Ռուսաստան / և Գավառ / Հայաստան / համայնքները /այսուհետ կողմեր/ ի դեմս քաղաքապետերի, նկատի ունենալով երկկողմանի համագործացության կարեւորությունը՝ փոխադարձ եղբայրական կապեր հաստատեցին՝ սոցիալ- տնտեսական կյանքի զարգացման կապերի խթանման եւ համագործակցության վերաբերյալ:
Հաշվի առնելով փոխադարձ համագործակցության հետագա կապերի զարգացումն ու խորացումը, երկու կողմերը պատրաստ են ստեղծել նպաստավոր համապատասխան պայմաններ:
Փոխադարձ համագործակցության՝ եղբայրական կապերի հաստատման գործում կարեւորագույն տարր են հանդիսանում առեւտրա-տնտեսական, մշակութային եւ զբոսաշրջության զարգացման նախադրյալները:
Գավառի եւ Նովոռոսսիյսկի քաղաքապետարանների միջեւ համագործակցությունը մեծ հնարավորություններ կստեղծի երկկողմանի հարաբերությունների զարգացման եւ խթանման ուղղությամբ:

- այս բարեկամության հաստատումը միջոց է ազգաբնակչության և քաղաքների զարգացման, որը նպաստելու է նաեւ խաղաղության, ազատության և բարգավաճման ոգու ուժեղացմանը
- այս բարեկամության հաստատումը համայնքների միջև կնպաստի մշակութային, սոցիալական և տնտեսական աճին :

Որոշվում է համաձայնագիրը դասակարգել հետևյալ հիմքերով.

## ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը միասնական որոշում են ընդունում պահպանել եղբայրության ընդհանուր փոխհարաբերությունները, միասնական և եղբայրական բարեկամությունը ուժեղացնող փոխադարձ ըմբռնումը՝ ի նպաստ երկու համայնքների առաջընթացի, զարգացման և բարեկեցության ապահովման.

## ՀՈԴՎԱԾ 2

Հուշագրով ամրագրված համագործակցությունը իրականացվելու է կողմերի օրենսդրության եւ սահմանադրության համապատասպան՝ փոխադարձ հավասարության եւ համագործակցության շրջանակներում: